## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Օգոստոսի 4-ին, կիրակի.- Ե. կիր. զկնի Վարդավառի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ո՞չ սա է որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն եւ զմայր» (Հովհ. Զ 42) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Օգոստոսի 11-ին, կիրակի.- Զ. կիր. զկնի Վարդավառի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Բայց արդ մնան հաւատք, յոյս, սէր, սոքա երեքեան. եւ մեծ քան զսոսա՝ սէր է» (Ա Կորնթ. ԺԳ 13) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 82):

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Օգոստոսի 17-ին, շաբաթ.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբղ. Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 84):

***Օգոստոսի 18-ին, կիրակի.- ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ Կոյս Աստուածածին՝ Մարիամ» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Օգոստոսի 19-ին, երկուշաբթի.- Բ. օր Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գարեգին աբղ. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հոգւոցն հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արա հանգիստ եւ ողորմութիւն, եւ մեզ մեղաւորացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ վասն համորեն ննջեցելոց:

***Օգոստոսի 25-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Վերափոխման:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 79):

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի: